ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

1905-1906 ԹԹ. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.153

ԱՄՓՈՓՈՒՄ

XX դարի սկզբին ցարական Ռուսաստանի ներքին կյանքում տեղի էին ունենում քաղաքական այնպիսի իրադարձություններ, որոնք իրենց վճռորոշ ազդեցությունն ունեցան կայսրության տիրապետության տակ գտնվող կովկասյան ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում: Հեղափոխական շարժումներն ավելի խորացան ռուս-ճապանական պատերազմը սկսվելու պահից, երբ ռուսական բանակը մեծ կորուստներ ունեցավ և պարտություն կրեց: 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում մի շարք ճակատներում ցարական զորաբանակների կրած պարտություններն ավելի էին խորացնում հեղափոխական շարժումները, որոնք սպառնում էին տարածվել նաև Անդրկովկասում: Այս ընթացքում Անդրկովկասում բռնկվում են հայ-թաթարական ընդհարումները:

Ցարական իշխանություններն երկրի ներքին հանգստությունը խաթարող գլխավոր մեղավորներ համարում էր կայսրության հյուսիս-արևմտյան և արևելյան շրջաններում բնակվող լեհերին, ֆիններին, ինչպես նաև հրեաներին: Անդրկովկասյան տարածաշրջանում առավել վտանգավոր տարրի համբավ էին ձեռք բերել հայերը: Լեոյի դիպուկ բնութագրմամբ. «Առանձնապէս վտանգաւոր էին համարւում հայերը, որոնց մէջ արդէն ներգործական դեր էին խաղում յեղափոխական տարրերը» **(Լէօ,1934):**

Բոլորի համար պարզ դարձավ, որ Ցարական կառավարությունն արդեն անկարող էր կառավարել երկիրը: Հեղափոխական ալիքը գնալով մեծանում էր՝ ընդգրկելով ողջ երկիրը. ամենուր բողոքներ, ցույցեր, գործադուլներ: Իսկ ռուսական կառավարությունը գնալով նահանջում էր, որպեսզի խաղաղություն վերահաստատի երկրում և վերականգնի իր կորցրած դիրքը Եվրոպայում: Նահանջի վառ օրինակ էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որում խոստանում էր. «քաղաքացիական ազատութեան անյողդողդ հիմունքներ», «ոչ մի օրէնք չըպետքէ ոյժ ստանայ առանց Պետական դումայի հաւանութեան...» **(ՀԱԱ, ֆ. 1457):** Սակայն դա կառավարության կողմից մտածված քայլ էր, որը ոչ մի դրական փոփոխություն չբերեց: Ահա այսպես ստեղծվել էր քաղաքական բարդ իրադրություն, որի պայմաններում ռուսական կառավարող բյուրոկրատիան լավ էր հասկանում, որ ընթացող պատերազմին զուգահեռ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել մոտեցող աղետը կասեցնելու համար և հրաժարվել գոլիցինյան կոպիտ քաղաքականությունից: Այդպիսի քաղաքականության վառ ապացույցը հայ-թաթարական կռիվների բռնկումից հետո Կովկասի փոխարքայության վերականգնումն էր **(Всеподданейший ..., 1913)**:

Ռուսական իշխանությունները շատ լավ էին հասկանում, որ հեղափոխությունը կասեցնելու համար ամենափորձված միջոցը դրացի ժողովուրդների միջև ազգայնականության զարգացումն էր, ազգամիջյան փոխհարաբերությունների սրումը: Այս տեսակետից Անդրկովկասը վերոնշյալ քաղաքականության համար ամենահարմար տարածաշրջանն էր, քանի որ. «Կովկասը անցնելով ռուսական կառավարութեան ձեռքը ներկայացնում էր մի անկերպարան, կիսակուլտուրական երկիր, եւ բովանդակում էր իւր մէջ ժողովուրդներ տարբեր կուլտուրական մակարդակով եւ առանձնայատուկ դասակարգային դիֆերենցիայով» **(Ռուբենի Ալ., 1905)**, հետևաբար այստեղ հեշտությամբ կարելի էր սրել ազգամիջյան հարաբերությունները: Այսինքն՝ «հայ-թրքական պատերազմները հարկաւոր եղան ռուսական բիւրոկրատիային նաեւ իբրեւ մի միջոց՝ կովկասեան ազգերն իրարից բաժանելու համար» **(Լէօ, 1934):**

Օգտվելով ազգերի միջև առկա տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլ առկա խնդիրներից՝ ռուսական կառավարությունը կարողացավ հրահրել հայ-թաթարական կռիվները: Հեղափոխությունը կասեցնելու համար ռուսական բյուրոկրատիան սկսեց հակամարտություն առաջացնել Անդրկովկասում ապրող ժողովուրդների միջև:

Բանալի բառեր և արտահայտություններ. *հայ-թաթարական կռիվներ, ընդհարումներ, գործոններ, էթնիկական, սոցիալ-տնտեսական, մշակութային պատճառներ, ցարական իշխանություններ, Անդրկովկաս, հրահրիչ գործունեություն, հարևան ժողովուրդներ, ազգային ինքնություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ-թաթարական ընդհարումները ռուսական կառավարության համար եղան միջոց, որով նրանց հաջողվեց իրարից բաժանել կովկասյան ազգերին: Այդ գործը կատարեց Թիֆլիս ժամանած փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովը: Ցարական կառավարության կողմից կռիվները ծրագրված լինելու մասին փաստում են շատ հեղինակներ: Սարգիս Օհանջանյանն իր հուշերում գրում է. «Երկու տարուայ տեւող այդ անօրինակ կռիվը հազարաւոր մարդկային կեանքեր խլեց, հարիւաւոր գիւղեր ոչնչացրեց ու տասնեակ միլիոնների տնտեսութիւնը հող ու մոխիր դարձրեց... Իսկ կառավարութիւնը, յանձին երկրի մեծ ու փոքր պաշտոնեաներին ու սպառազէն բանակին, Պիղատոսի նման ձեռքերը խաչած, դիւային հրճուանքով՝ հանդիսատես եղաւ իր իսկ ձեռքով ծրագրուած հայ ու թուրք դրացի ժողովուրդների բնաջնջման...» **(Ֆարհատ, 1943)**:

Ազգամիջյան կռիվներ հրահրելու հարցում ռուսական սադրիչ քաղաքականությունն է մատնանշում նաև Ա-Դո-ն՝ նշելով, որ կռիվները նպատակ ունեին հեղափոխական ալիքից հեռու պահել կայսրության հարավը **(Ա-Դո, 1907)**: Ռուսական սադրիչ քաղաքականությունը մատնանշում են նաև Արամայիս Ազնավուրյանը և Վահան Մինախորյանն իրենց հուշերում **(Հայրապետեան Ե., 1939, (Մինախորեան Վ., 1948)**:

Ցարական կառավարության հրահրիչ գործունեության մասին փաստում է նաև ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը, արձանագրելով, որ «ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պառակտող քաղաքականութիւնից» **(«Դրօշակ», 1907)**: ՀՅԴ նշանավոր գործիչ Աբրահամ Գյուլխանդանյանը ևս հայ-թաթարական կռիվների պատճառ նշում է Ռուսաստանի հրահրիչ գործունեությունը: Գրում է, որ կռիվների սկսվելու պահից սկսած ցարական ոստիկանությունը ոչ մի քայլ չէր ձեռնարկում, որպեսզի դադարեցնի կամ զսպի սկսված թաթարական վայրագությունները: Ռուսաստանի իշխանությունները հեղափոխական հայերի մեջ վտանգ էին տեսնում ստեղծված ռեժիմի տապալման հարցում և որևէ քայլ չէին կատարում, որպեսզի դադարեցնեն սկսված կռիվները: Հայերին շատ ավելի վտանգավոր էին համարում պետության համար, քան պանիսլամիստ թաթարներին, այդ իսկ պատճառով նրանք թաթարներին ավելի հավատարիմ էին համարում, և փորձում էին նրանց օգտագործել հեղափոխական հայկական կոմիտեներին տապալելու գործում: Բաքվի նահանգապետ Նակաշիձեն այս քաղաքականությունը իրականացնողներից մեկն էր **(Գիւլխանդանեան Ա., 1933)**:

Այսրկովկասում, մինչև ռուսական տիրապետության հաստատումը, հայերը և տեղի թաթարներն ապրում էին կողք կողքի: Ռուսական իշխանությունները շուրջ 50 տարի հայերին դիտում էին որպես պետության հավատարիմ հենարան տարածաշրջանում և, ընդհակառակը, նախկինի համեմատ որոշակիորեն սահմանափակել էին մահմեդականների արտոնությունները: Այս ամենը արդեն իսկ ներգործություն ունեցավ երկու ժողովուրդների հարաբերությունների լարման գործում: Պետական ապարատի օղակներում գնալով մեծանում էր կրթված և ճկուն հայ պաշտոնյաների թիվը: Այս ամենը առաջացնում էր մահմեդական բեկերի և շարքային զանգվածի դժգոհությունը: Նրանց համար ընդունելի չէր, որ նախկինում իրենց ենթակա «երկչոտ, թույլ, ստրուկ հայը» սկսել է մրցակցել թաթարների հետ: Հետևանքն այն եղավ, որ թաթարների դժգոհությունը և ատելությունը գնալով ավելացավ հայերի հանդեպ, և երբեմնի խաղաղ ապրող

հարևան երկու ժողովուրդների հարաբերությունները դարձան թշնամական: Թաթարներին այդ հարցում աջակցում էր ռուսական կառավարությունը, որը նույնպես բարյացկամ վերաբերմունք չուներ հայերի հանդեպ: Նրանց համար թաթարները դառնում էին գործիք, որպեսզի հայերին կոտորեին և տարածաշրջանում ունենային իրենց երբեմնի իշխող դիրքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի լուսաբանման հիմքում դրված են պատմականության, փաստերի համադրության և իրադարձությունների համակողմանի վերլուծության պատմահամեմատական և պատմաքննական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ռուսական իշխանությունները հայ-թաթարական կռիվների գլխավոր մեղավոր համարում էին հայ ժողովուրդին՝ մասնավորապես ՀՅԴ-ն, որին ցանկանում էին ոչնչացնել: Սակայն Դաշնակցությունը չկոտրվեց, այլ, ընդհակառակն, ավելի ուժեղացավ: Իսկ թաթարները, ունենալով ռուսական կառավարության աջակցությունը, փորձում էին կոտորել հայերին, որը իրենց համար միջոց էր դառնալու, որպեսզի նորից հասնեին իրենց հին փառքին **(Լէօ,1934):**

Թաթար գործիչների շրջանում կար մի մտայնություն նաև, որ հայ-թաթարական կռիվները կնպաստեն էթնիկ հավաքական գիտակցության բարձրացմանը: «Մեզ՝ հայերիս,-գրում է Դավիթ Անանունը,-որպես արդի իմաստով բարդ կազմ ունեցող ազգութեան, վիճակուել է կողք-կողքի ապրել մի ազգի հետ, որն առանց շերտաւորումների չէ, բայց եւ միապաղաղ մի զանգուած է, միապաղաղ այն պատճառով, որ նրա տարբեր խաւերը դեռ չեն ապրում իրենց առանձին հասարակական ձգտումներով» **(«Բագուի ձայն», 1913)**:

Էթնիկ հավաքական գիտակցության բարձրացման տեսակետն էին առաջ քաշում թաթար մտավորականները: Նրանք համոզված էին, որ կռիվների շնորհիվ է, որ թաթարները սկսել են հասկանալ մի ցեղի պատկանելու փաստը **(Վարդանյան Թ., 2003)**:

Թաթար բնակչությունը մինչև XIX դարի վերջերը անկազմակերպ մի կրոնական համայնք էր, բայց XX դարի սկզբից արդեն ազգայնորեն կազմակերպվում էր, և իր հայացքներն էր ուղղել «մերթ դէպի իսլամական Պարսկաստան եւ մերթ Օսմանների Տաճկաստանը» **(Գիւլխանդանեան Ա., 1933):**

Այսպիսով, թաթարները կռիվների ընթացքում էլ ավելի խորացրեցին իրենց էթնիկ հավաքական գիտակցությունը և իրենց մի ցեղ լինելու գաղափարը: Իսկ հային արդեն ընդունում էին ոչ թե իբրև իրենց հարևան ժողովուրդ, այլ որպես թշնամի, և այդ գիտակցությունը մինչև օրս էլ առկա է երկու հարևան ժողովուրդների մոտ:

Հայ-թաթարական կռիվների պատճառների թվում ամենևին երկրորդական չէին սոցիալ-տնտեսական և մշակութային այն էական խնդիրները, որոնք առկա էին կողք կողքի ապրող երկու ժողովուրդների միջև:

Կովկասն անցնելով Ռուսական տիրապետության տակ, հիմք դրեց բազմազան տնտեսական ու քաղաքական խնդիրների, քանի որ տարածաշրջանի ժողովուրդները՝ հայերը, թաթարները, վրացիները գտնվում էին տնտեսական, քաղաքական, մշակութային տարբեր աստիճանների վրա:

Անդրկովկասում մեծամասնություն կազմող ժողովուրդները հայերը, վրացիները և կովկասյան թաթարներն (կովկասյան թուրքեր) էին: Ռուսական կայսրության տիրապետության պայմաններում հայերը ձեռք էին բերել կյանքի զարգացման առավել նպաստավոր պայմաններ: Հայի մեջ, իբրև անցյալում ավելի շատ ճնշված, քաղաքականապես հալածված ժողովրդի, զարգացրել էր հարմարվելու ընդունակությունը: Հայությունը ժամանակի հետ կարողացել էր զարգացնել արհեստն ու առևտուրը, որոնք նրան հնարավորություն էին տալիս տարածաշրջանում մրցակցել մյուս ժողովուրդների հետ **(Ռուբենի Ալ., 1905)**: Շնորհիվ դրա կովկասահայությունը ռուսական տիրապետության շրջանում կարողացավ «համակովկասյան կյանքում» և առավելապես առևտրի ու արդյունաբերության մեջ կարևոր դիրքեր զբաղեցնել **(Վարանդեան Մ.,1992):**

Անդրկովկասում բնակվող ազգերից մյուսն էլ վրացիներն էին, որոնք, մտնելով Ռուսական կայսրության կազմ, ենթադրում էին. «իրենց ֆեոդալական թագավորութիւնը վերջացրած հասարակութիւն» **(Ռուբենի Ալ., 1905)**:

Վրաց հասարակության մեջ կարելի էր առանձնացնել ազնվականներին և նրանցից կախում ունեցող գյուղացիներին, իսկ երրորդ դասակարգը՝ բուրժուազիան, իրենից ոչինչ չէր ներկայացնում: Վրաց հասարակության այս դասակարգը, ըստ էության, լրացրել էին հայերը: Պատահական չէ, որ առաջխաղացում ունեցող բուրժուազիայի պայմաններում վրաց ազնվականները հայտնվեցին երկրորդ պլանում **(Գիլլխանդանեան Ա.,1933):** Ռուսական կառավարության կողմից նրանք ստացան արտոնություններ և ձևավորվեցին որպես ազնվականական դաս:

Երրորդ ազգությունը Անդրկովկասում թաթարներն էին, որոնք ևս վրաց հասարակության նման ապրում էին ավատատիրական մնացուկներով: Նրանք Անդրկովկասում թվապես գերակշռում էին, բայց զարգացած ու ստեղծող ազգ չէին: Հայ վաճառականները հարստանալով սկսում էին տնտեսապես ճնշել թուրք բեկերին և վրաց ազնվականներին, նույնիսկ տեր էին դառնում նրանց հողերին:

Թաթար բեկերի համար ընդունելի չէր վերոնշյալը՝ անցյալում ունեցած իրենց փառքից հետո, կարծում էին, որ դրա միակ մեղավորը հայ ժողովուրդն է: Դրա հետևանքով գնալով ավելի էին սրվում հարաբերությունները հայերի ու թաթարների միջև, որը վերածվում էր թշնամության: Կովկասյան թաթարների վերնախավը, մտնելով Ռուսական կայսրության կազմ, զրկվել էր իր նախկին արտոնություններից՝ պահպանելով դրանց չնչին հատվածը, սակայն մնացել էր նույն շահագործող կալվածատերը: Այդ էր պատճառը, որ Ցարական կառավարությունը, հենարան ունենալով կալվածատիրական դասը, թաթարներին և վրացիներին համարում էր վստահելի տարր **(Վարդանյան Թ., 2000)**:

Անդրկովկասում ապրող այս երեք ազգությունների միջև առկա տարբերությունները հնարավորություն տվեցին ցարական կառավարությանը վարել ազգամիջյան կռիվներ հրահրելու քաղաքականություն:

Խոշոր կապիտալի մուտքը Կովկաս լայն մրցակցության ասպարեզ դարձավ տեղի ապրող ժողովուրդների համար:Ռուսական կայսրության տիրապետության շրջանում արևելահայությունը, թեև չէր ստանում ազատություն, բայց ստանում էր տնտեսական ու մշակութային զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ: Շնորհիվ դրա հետագա տարիներին Կովկասում ձևավորվում է հայկական կապիտալը: Հայ բանկային կապիտալի կենտրոն դարձավ Թիֆլիսը, իսկ արդյունաբերական կապիտալի կենտրոն դարձավ Բաքուն:

Դեռևս XIX դարի 60-ական թվականներից սկսվել էր հայության ներհոսքը Բաքու, ուր դրվում էին նավթարդյունաբերության հիմքերը: XIX դարի երկրորդ կեսին, երբ սկսվեց Բաքվի նավթարդյունաբերության զարգացումը, հայ կապիտալի ներկայացուցիչները, շնորհիվ իրենց ճարպկության և բնատուր խելքի, կարողացան կարճ ժամանակում ազդեցիկ դիրքեր գրավել Բաքվի նավթարդյունաբերության մեջ: Նրանք, ինչպես մյուս ազգի ներկայացուցիչները, սկսեցին նավթահանքեր գնել: Նրանցից ոմանք իրենց ճարպկության և բնատուր խելքի շնորհիվ կարողացան տիրել Բաքվի նավթաբեր հողերի խոշոր հատվածների՝ երբեմն չնչին գներով դրանք գնելով մահմեդական բեկերից **(Ռուբենի Ալ., 1905)**: Հայ մեծահարուստները՝ Մանթաշովը, Ծատուրյանը, Միրզոյանը, Ղուկասյանը, ավելի ուշ՝ Լիանոզովը և ուրիշներ դարձան նավթաբեր հողերի տերեր և ստեղծեցին իրենց նավթագործարանները՝ հաջողությամբ մրցակցելով ինչպես եվրոպական, այնպես էլ ռուսական կապիտալի ներկայացուցիչների հետ: Արդեն XIX դարի 90-ական թվականներին հայ կապիտալիստները Անդրկովկասում խոշոր ուժ էին ներկայացնում, ինչի արդյունքում արդեն XX դարասկզբին Բաքվի նավթարդյունաբերության 40%-ը պատկանում էր նրանց: Այս հանգամանքը ունեցավ էական նշանակություն, քանի որ դրամատիրական հարաբերությունների գլխավորը քրիստոնյա ժողովուրդներն էին և ոչ թե թաթարները: Սա էր պատճառը, որ ֆեոդալական մնացուկներով ապրող բեկությունը չէր շարժվում ժամանակին համընթաց: Դավիթ Անանունն այս մասին գրում է. «Հայ բուժուազիայի եւ թուրք բէկութեան հակամարտութիւնն իր մեջ ցեղային բովան-

դակութիւն չունի: Հասարակական զարգացման եւ հասարակական անշարժութեան պայքարն է, որ տեսանելի կամ գաղտնի առաջ են տանում հայ բուրժուազիան եւ թուրք բէկութիւնը: Այդտեղից են արմատ առնում այն բոլոր անախորժութիւնները, որ գալիս են ստեղծելու հայ-թաթարական կռիվների հանգոյցը: Հայ ժողովրդական մասսաները ժամանակի թելադրանքի համեմատ նույնպէս ընթանում են բուրժուազիայի ստեղծած հասարակարգի հունով: Թուրք ժողովրդական մասսաները դեռ թմրած են, դեռ կոյր հպատակ են ամեն մի հեղինակութեան» **(«Բագուի ձայն», 1913)**:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը մի ժամանակահատված է հայ ժողովրդի պատմության մեջ, երբ հայի ինքնությունը սկսում է մասնակիորեն փոփոխություն կրել: Հայ ժողովուրդն արդեն հոգեբանորեն պատրաստ էր կռվելու, նրա մոտ ձևավորվել էին հայրենասիրական-ազատասիրական գաղափարներ և պատրաստ էր նույնիսկ հայրենիքի համար նահատակվելու: Եվ դա առաջնահերթ հետևանք էր կրթական համակարգի զարգացման: Իսկ թաթարների մոտ դեռևս ցածր էր կրթական մակարդակը: Այդ մասին է խոսում այն, որ 1904 թ. Բաքու քաղաքի ուսումնական հաստատություններում սովորողների 4,5 %-ն էին մահմեդականներ, այն դեպքում, երբ հայերը կազմում էին 41,1 %, իսկ ռուսները 33,8 % **(Всеподданейший …., 1905).**

Հայերի ձեռքին էր գտնվում նաև Թիֆլիսը: Այն դարձավ հայ կապիտալի կենտրոն: Տեղի տնտեսական ձեռնարկությունների մեծագույն մասը գտնվում էր հայ բուրժուազիայի ձեռքում, մասնավորապես ծխախոտի արդյունաբերությունը, ոգելից խմիչքների արտահանությունը: Հայ կապիտալիստների ձեռքում էին գտնվում նաև Արցախի, Գանձակի Նուխի գավառի մետաքսագործությունը և բամբակի արտադրությունը **(Ռուբենի Ալ., 1905)**:

Այսպես, հայ բուրժուազիան իր բնատուր խելքի շնորհիվ կարողացել էր տեր դառնալ տարածաշրջանի խոշոր կապիտալին, որը ընդունելի չէր կարող լինել ո՛չ ռուսների, ո՛չ թուրքերի, ո՛չ վրացիների համար: Ռուսական կառավարության համար ընդունելի չէին հայ բուրժուազիայի այդչափ հզորացումը, իսկ հայությունը

չէր կարող ըմբոստանալ կառավարության դեմ և ստիպված էր հարմարվել կառավարության կատարած ձեռնարկներին: Ինչքան էլ հայությունը զգուշավոր քաղաքականություն էր վարում ռուսների հետ, չկարողացավ փոխել իրավիճակը:

Ալեքսանդր Ռուբենին (Ալեքսանդր Ծատուրյան) հայ-թաթարական հակամարտության դրդապատճառները կապում է սոցիալ-տնտեսական և քաղաքական երեք գործոնների հետ: Առաջինը, ըստ նրա, հայ կապիտալի գերազանցությունն էր թաթարական կապիտալի և սնանկացող կալվածատիրու-թյան հանդեպ, երկրորդ գործոնն ինքնակալության տապալման ժամանակաշրջանն էր, երբ թաթար դրամատերերը գիտակցել էին ինքնակալության հետ միանալու և գործող կարգերից դժգոհ տարրերի դեմ կռվելու անհրաժեշտությունը: Եվ երրորդը, երբ հեղափոխական շարժումը թաթարների մոտ արթանացրեց քաղաքական գիտակցությունը և առաջ բերեց քաղաքական ամբողջության մտայնությունը **(Ռուբենի Ալ., 1905)**:

Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան) իր «Կովկասեան Վանդէան» աշխատության մեջ, անդրադառնալով կռիվների պատճառներին, գրում է. «Անդրկովկասեան մեծ աղէտի պատճառ են հանդիսանում, մեր «իրազեկ» դատաւորների կարծիքով,- մերթ հայի տնտեսական ճնշումներն ու թուրքի սնանկ, անճար վիճակը, մերթ երկու ազգերի բուրժուա ու ազնւական դասակարգերի մրցակցութիւնը, բայց ամենից աւելին հայկական նացիոնալիզմը և մասնավորապէս Հ.Յ.Դաշնակցութեան ազգայնամոլ հաւատամքն ու ընթացքը, սխալ տակտիկան, նրա գրգռումներն պրովոկացիաները թուրք ժողովրդի դէմ և այլն և այլն...» **(Յովհաննիսեան Մ., 1907):**

Այսպիսով, ազգամիջյան կռիվների բռնկման համար պատճառ հանդիսացան պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական և մի շարք այլ գործոններ: Միքայել Վարանդյանի պատկերավոր բնութագրմամբ. «Տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական պատճառներու հիւսվածք մըն է այն՝ որու մէջ մէկ երկուքը առաջնակարգ ու

վճռական դեր խաղացին անակնկալ հրդեհի բռնկման մէջ» **(Վարանդեան Մ.,1992)** :

Բաքվի առաջին ընդհարման օրերի ինքնապաշտպանության անմիջական մասնակից Վահան Մինախորյանը սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնները համարում է հայ-թաթարական կռիվների գլխավոր պատճառներ՝ նշելով. «Տնտեսապէս նրանք արդիւնք էին թուրք նորաբոյս բուժուազիայի եւ աւատապետութեան պայքարի՝ ուղղուած հայ բուրժուազիայի դեմ: Քաղաքականապէս այդ ընդհարումները արգասիք էին ռուս միապետութեան սադրանքների եւ նպատակ ունէին հեռու պահել յեղափոխութիւնից Անդրկով-կասը, տեղական ազգամիջեան պատերազմների միջոցով, ինչպէս նաեւ հայ ըմբոստ ժողովրդի ողնաշարը կոտրել» **(Մինախորեան Վ., 1948)**:

Հայերը շատ խելացի էին և գործունյա: Նրանք արագ կարողացան հարստանալ, որը պատճառ էր, որ հայերին մեղադրեին իրենց ունեցվածքին տիրելու մեջ: Օրինակ՝ Թիֆլիսի հարստությունները վրաց կալվածատերերի ձեռքից անցան հայերին: Հայերին կարելի էր տեսնել այնտեղ, որտեղ առևտուր կար: Այս փաստն էր, որ ամենուր դժգոհությունների ու թշնամանքի տեղիք էր տալիս: Հայ-թաթարական կռիվների հիմքում ընկած էր նաև սոցիալ-մշակութային պատճառը: Նորաստեղծ հայ բուրժուազիան, թեև առանձնապես կրթված չէր, բայց գիտակցում էր գիտելիքի արժեքը: Պատահական չէ, որ նրա ներկայացուցիչները XIX դ. երկրորդ կեսին ձեռնամուխ եղան ակտիվ բարեգործական գործունեության: Նախ «Բաքվի մարդասիրական ընկերությունը», մի փոքր ուշ նաև «Կովկասի հայ բարեգործական ընկերությունը», շնորհիվ հայ մեծահարուստների, ծավալեցին բարեգործական ակտիվ քայլեր: Արդեն «Կովկասի հայ բարեգործական ընկերության» վարչության գործունեության մեջ նկատելի փոփոխություն և ինքնավստահություն է նկատվում 1905 թվականից, երբ Կովկասի բարձր կառավարության ձևը փոխվում է և փոխարքա է նշանակվում կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովը: 1905 թ. հուլիսի 17-ին «Կովկասի հայ բարեգործական ընկերությունը», վարչությունը որոշում է

թույլտվություն խնդրել դրամով և հագուստով նվիրատվություններ հավաքելու, հօգուտ հայ-թաթարական ընդհարումներից տուժածների Թիֆլիսում և նրա գավառներում ու այդ մասին հայտարարություն տպագրելու լրագրերում: Շուտով վարչությանը օգնության է հասնում ինքը՝ կառավարությունը: Փոխարքայի դիվանատունը կարգադրություն է անում, որ պետական գանձարանը բարեգործական ընկերությանը տրամադրի 8200 ռուբլու արժեթղթեր, որոնք պահվում էին այնտեղ թուրքահայ գաղթականների անունով **(ՀԱԱ, ֆ.28):** Հայ բանվորների համար բացվում էին հիվանդանոցներ, դպրոցներ, գրադարաններ, կառուցվում անհամեմատ բարեկեցիկ հանրակացարաններ: Բացի այդ, շնորհալի հայ երիտասարդները բարեգործական հաստատությունների միջոցներով գործուղում էին Եվրոպա և Ռուսաստան բարձրագույն կրթություն ստանալու: Բնական է, որ հայ բանվորների անհամեմատ բարվոք վիճակն առաջ էր բերում մահմեդական, հատկապես թաթար, բանվորների նախանձը և որպես դրա հետևանք՝ թշնամանքը հայերի հանդեպ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, չհերքելով հայ-թաթարական կռիվների հրահրման գործում ռուսական իշխանությունների պատասխանատվությունը, այնուհանդերձ, պետք է արձանագրել, որ ճիշտ չէ այդ կռիվները միայն դրանով հիմնավորելը: Դրա կողքին առկա էին նաև այլ, ոչ պակաս ազդեցիկ պատճառներ: Հայ և թաթար ժողովուրդների միջև սկսած կռիվները, բացի ցարական կառավարության հրահրիչ քաղաքականությունից, ունեին նաև այլ պատճառներ: Դրանց թվում էին նաև այն խնդիրները, որոնք առկա էին երկու ժողովուրդների փոխհարաբերություններում, և որոնց մի մասը սերտորեն կապված էր անցյալի պատմության հետ: Ազգամիջյան կռիվների բռնկման համար պատճառ հանդիսացան էթնիկական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական և մի շարք այլ գործոններ: Հայ-թաթարական կռիվները նպաստեցին արևմտահայերի և արևելահայերի միջև կապերի սերտացմանն ու

տարածաշրջանում հայերի հեղինակության խիստ բարձրացմանը, իսկ թաթարների պարագայում՝ ազգային ինքնության ձևավորմանը:

Ավելի քան մեկ դար առաջ տեղի ունեցած այդ իրադարձությունների լուսաբանումն ու վերհանումն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Արցախյան առկախ խնդիրը, հայ-ադրբեջանական մեղմ ասած ոչ բարեկամական հարաբերությունները միանշանակ ուշադրության կենտրոնում են պահում նաև ոչ հեռավոր անցյալի պատմական իրադարձությունները: Դրանց խորքային իմացությունը թույլ է տալիս հստակ բացատրելու հայ-ադրբեջանական ներկա հարաբերությունների իրական արմատները և որոշակիորեն կանխատեսելու մոտ ապագայի հնարավոր զարգացումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)**, ֆ. 28, g.1, գ. 86, թ.1-5:
2. **Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)**, ֆ. 1457, g. 1, գ. 39, թ. 1:
3. **Ա-Դօ (1907)**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, տպ. Այվազեանցի և Նազարեանցի:
4. **«Բագուի ձայն» (1913)**, Բագու, 28 մարտի, N 67:
5. **Գիւլխանդանեան Ա. (1933)**, Հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, սեպտեմբեր, N 11, էջ 154-159:
6. **«Դրօշակ» (1907),** մայիս, N 5, էջ 72:
7. **Լէօ (1934),** Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Բ հատոր, Պարիզ, տպ.Պահրի Եղբարց:
8. **Հայրապետեան Ե. (1939)**, Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, յունուար, N 3, էջ 138-143:
9. **Մինախորեան Վ. (1948)**, Մեր կեանքի օրերը, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, N 7, էջ 165:

10. **Յովհաննիսեան Մ. (1907),** Կովկասեան Վանդեան, Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանյանի:
11. **Ռուբենի Ալ.** (**1943**), Հայ-թիւրքական ջարդերի տնտեսական-քաղաքական պատճառները, «Մուրճ», Թիֆլիս, նոյեմբեր-դեկտեմբեր 1905, N 11-12, էջ 189-206:
12. **Վարանդեան Մ.**(1992), Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Պարիզ, հրատ. Գահիրէ:
13. **Վարդանյան Թ.** (**2003**), Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն (1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, N 1, էջ 72-78:
14. **Վարդանյան Թ.** (**2000**), Թաթարական ազգաբնակչության ազգայնական դրսևորումները Անդրկովկասում XX դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, N 3, էջ 89-97:
15. **Ֆարհատ (Օհանջանեան Ս.) (1943),** Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, սեպտ.-հոկտ., N 5, էջ 74-83:
16. Всеподданейший отчет о произведенной в 1905 году по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, 1905, СПб., стр. 97-98. http://elib.shpl.ru/ru/nodes/65967
17. Всеподданейший отчет за восемь лет управления Кавказом Генерал-Адютанта Графа Воронцова-Дашкова (1913), СПб., стр. 3-4. http://elib.shpl.ru/ru/nodes/36048

REFERENCES

1. **Hayastani azgayin arxiv /National Archives of Armenia/**, f.28, vol.1, vol. 86, pp.1-5.
2. **Hayastani azgayin arxiv /National Archives of Armenia/**, f. 1457, vol. 1, vol. 39, p. 1.

3. **A-Do, (1907)**, Hay-t'owrqakan y'ndharowmy' Kovkasowm /Hay-t'owrqakan y'ndharowmy' Kovkasowm/ /Armenian-Turkish Conflict in the Caucasus/, Yerevan, Ayvazyants and Nazarians printing house.
4. **Bagow /«Bagowi d'ayn»/ /"Voice of Bagu"/ (1913)**, Bagu, March 28, No. 67.
5. **Gyulkhandanyan A. (1933)**, Hay-t'at'arakan y'ndharowmnery' Andrkovkasowm /Armenian-Tatar Conflicts in Transcaucasia/, "Homeland" magazine, Boston, September, No. 11, pp. 154-159.
6. **«Dro'shak» /«Dro'shak»/ /"Flag"/ (1907)**, May, No. 5, p. 72.
7. **Leo (1934),** T'iwrqahay yeghap'oxowt'ean gaghap'arabanowt'iwny' /The Ideology of the Turkish-Armenian Revolution/, Vol. 2, Paris.
8. **Hayrapetyan E. (1939)**, Aramayis Aznawowreani yowshery' /The Memoirs of Aramayis Aznavouryan/, "Homeland" Magazine, Boston, January, No. 3, pp. 138-143.
9. **Minakhorean V. (1948),** Mer keanqi o'rery' /Mer keank'i orery/, «Hayrenik'» amsagir, yulis, N 7, ej 165.
10. **Hovhannisyan M. (1907)**, Kovkasean Vandean /Caucasian Vandian/, Tbilisi, Nvard Aghanyan's printing house.
11. **Rubeni A. (1905)**, Hay-t'iwrqakan jarderi tntesakan-qaghaqakan pattwar'nery' /The Economic and Political Causes of the Armenian-Turkish Massacres/, "Murch", Tbilisi, November-December, No. 11-12, pp. 189-206.
12. **Vardanyan T. (2003)**, Azgamijyan hakamartowt'yowny' orpes e't'nik inqnowt'yan d'&avorman gorc'on (1905-1906 t't'. hay-t'at'arakan y'ndharowmneri o'rinakov) /The interethnic conflict as a factor in the formation of ethnic identity (on the example of the Armenian-Tatar clashes of 1905-1906)/, "Lraber of Social Sciences", Yerevan, No. 1, pp. 72-78.
13. **Varandean M.(1992),** H. Y. Dashnakts'ut'ean patmut'iwn /History of the Armenian Revolutionary Federation/, Pariz, hrat. Gahire.

14. **Vardanyan T. (2000)**, T'at'arakan azgabnakchowt'yan azgaynakan drs&o¬rowm¬nery' Andrkovkasowm XX dari skzbin /Nationalistic manifestations of the Tatar population in Transcaucasia at the beginning of the XX century/, "Bulletin of Yerevan University", Yerevan, No. 3, pp. 89-97.
15. **Farhat (Ohanjanian S.) (1943)**, Im yishatakarany' /My Memoir/, "Homeland" Magazine, Boston, September-October, No. 5, pp. 74-83.
16. Vsepoddaneyshiy otchet o proizvedennoy v 1905 godu po Vysochayshemu po¬ve-leniyu, senatorom Kuzminskim revizii goroda Baku i Bakinskoy gubernii /The most worthy report on the inspection of the city of Baku and the Baku province carried out in 1905 by the highest order of Senator Kuzminsky (1905)/, St. Petersburg, pp. 97-98. http://elib.shpl.ru/ru/nodes/65967
17. Vsepoddanneyshiy otchet za vosem' let upravleniya Kavkazom General-Ad"yutanta Grafa Vorontsova-Dashkova (1913) /General-Adjutant General Count Vorontsova-Dashkova (1913)/, SPb., p. 3-4. http://elib.shpl.ru/ru/nodes/36048

Карине Егиазарян

Рассмотрение причин армяно-татарских войн 1905-1906 гг.

Заключение

Ключевые слова и выражения: *армяно-татарские войны, конфликты, факторы, этнические, социально-экономические, культурные причины, царская власть, Закавказье, провокационная деятельность, соседние народы, национальная идентичность.*

Статья подготовлена на основе печатных источников, размещенных на сайте, воспоминаний современников, материалов, извлеченных из современной и более поздней прессы, а также различных исследований, опубликованных в разные годы в диаспоре и Армении.

На Кавказе 1905-1906 гг, произошли бурные события, которые на определенный период времени сосредоточили внимание всех армян на проблемах армян Кавказа. Различные проблемы, накопившиеся на протяжении веков в отношениях между армянским и татарским населением, проживающим по бокам рядом, благодаря провокационной политике царских властей, проявились во всех своих формах. в оттенках, сделав главным вопросом повестки дня вопросы борьбы за выживание кавказских армян и организации эффективной самообороны. Конфликты имели весьма серьезные и глубоко укоренившиеся религиозные, экономические, политические, культурные и национально-психологические причины.

Армяне Кавказа в те годы пережили трудный, но почетный период испытаний. Они понесли большие человеческие и материальные потери, но и получили необходимые уроки уверенности в себе и национального достоинства.

Изучение этих событий, произошедших более века назад, не утратило своей актуальности и сегодня. В центре внимания, безусловно, находится нынешняя арцахская проблема, недружественные армяно-азербайджанские отношения и исторические события не столь далекого прошлого. Их всесторонние знания позволяют нам четко разъяснить истинные корни нынешних армяно-азербайджанских отношений и спрогнозировать возможное развитие событий в ближайшем будущем.

Karine Yeghiazaryan

Examination of the causes of the armenian-tatar wars in 1905-1906. Conclusion

Key words and expressions: *armenian-Tatar wars, conflicts, factors, ethnic, socio-economic, cultural reasons, tsarist authorities, Transcaucasia, provocative activities, neighboring peoples, national identity.*

The article is based on printed sources available on the site, memoirs of contemporaries, materials extracted from the press of the time and later periods, and various studies published in the Diaspora and Armenia in different years.

In 1905-1906, turbulent events took place in the Transcaucasus, which for a certain period of time drew the attention of all Armenians to the problems of the Armenians of the Caucasus. The various problems accumulated over the centuries in the relations of the Armenian and Tatar populations living side by side, thanks to the provocative policy of the tsarist authorities, manifested themselves in all their shades, making the main issue of the agenda the issues of the struggle for existence and the organization of effective self-defense of the Armenians of the Caucasus. The conflicts had quite serious and deep-rooted religious, economic, political, cultural, national-psychological reasons.

The Armenians of the Caucasus went through a period of difficult but honorable trials in those years. They suffered heavy human and material losses, but they also received the necessary lessons of self-confidence and national dignity. The study of these events that took place more than a century ago has not lost its relevance today. The current Artsakh problem, the Armenian-Azerbaijani unfriendly relations, definitely keep the historical events of the not-so-distant past in the spotlight. Their comprehensive knowledge allows us to clearly explain the real roots of current Armenian-Azerbaijani relations and to predict possible developments in the near future.

Կարինե Եղիազարյան - Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայոց պատմության նոր շրջանի պատմություն: Հեղինակ է 1 մենագրության, 8 ուսումնամեթոդական աշխատանքների, 20 հոդվածների: karine.yegiazaryan@yandex.ru

Карине Егиазарян - Доцент кафедры истории Армянского народа Ереванского государственного университета, кандидат исторических наук. Область научных интересов: история армянской национально-освободительной борьбы конца XIX — начала XX вв., армянские политические партии, новый период истории Армении. Является автором 1 монографии, 8 учебно-методических работ и около 20 статей. karine.yegiazaryan@yandex.ru

Karine Yeghiazaryan - Associate Professor of the Department of Armenian History, Yerevan State University, Candidate of Historical Sciences. Scientific interests: the Armenian national liberation struggle of the late 19th and early 20th centuries, Armenian political parties, the history of the new period of Armenian history. Author of 1 monograph, 8 educational and methodological works, about 20 articles. karine.yegiazaryan@yandex.ru

Խմբագրություն է ուղարկվել 14.01.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 31.01.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.